

Կ. Պոլսի եւ Կեսարիոյ (ՄՁ. Թ. 948). Նւ. Թօգատի (ՄՁ. Թ. 532): Նախան Յակոբ պարք-ի հրաժարման առեւ Պոլիս գտնուելով՝ 1749 Զատիկին կը յաջորդէ անոր եւ հապիւ եօթն օր կը տեւէ իր պաշտօնը եւ կ'ստիպուի հրաժարիլ. այս մասին Սարգիս զպիր Յովհաննէսեան կը գրէ իր Վիպագրութիւն Կ. Պոլիս մայրաքաղաքին ձեռագիր գործին մէջ. «Պրոխորոն Վ. Սիւրստրեցի նուիրակ Երուսաղէմի ՌՃՂԸ (=1749) մարտի 26 նստաւ յօրն Զատիկի. Զ օր ժառանգեաց՝ յետ Զ աւուրց նոր Կիրակէի չաքաթի օրն քչեցին: Մինաս Վ. Ակնցի առաջնորդ Մշու Ս. Կարապետի ՌՃՂԸ (= 1749), որոյ վէքիլ նստաւ Յարութիւն վն Պալատցի, մինչեւ բերին զՄինաս յԱրքիւումայ, որ եմուտ Ստամպոլ ՌՃՂԸ (= 1749) եւ ժառանգեաց զաթոռն (Հա. 1914, էջ 590): Գրիգոր պարք. Պասմաճեան իր Յիշատակարանին մէջ (էջ 29—30) հետեւեալ կը գրէ Պրոխորոն վրդ-ի մասին. «Պրոխորոն վրդն, արքեպս. քաղցր բարութեւ եւ դիմօք եւ բազմաշխատ նուիրակն Ս. Երուսաղէմի, ի յայնմ ժամանակի ոմանք գլխաւոր իշխանքն հայոց. յորդորեցին զինքն, ի ծածուկ Յակոբայ պարք-էն. եւ արարին պատրիարք հայոց Կ. Պոլսոյ. որ ի ինեւ նորին, խեղճ եւ ողորմելին միայն եօթն օր կարաց տեւել ի պատրիարքութեան իւրում. այլ զկնի եօթն աւուրց, մեծաւ անարգութեամբ, բազում նախատանօք, զանազան զըրպարտութեամբ եւ բազում հայհոյութեամբ զաղաղակս բարձին, եւ ոչ ընդունեցին զինքն ամենեւին. այլ արտաքս հանին զինքն ի պատրիարքարանէն... մատնելով եւ տալով ի ձեռս բռնաւորաց՝ յաքսորս առաքեալ եղև ի դղեակն Պոնտոսի. ուստի մնալով ժամանակ ինչ, եւ զկնի անդ կալաւ զվիճակն իւր, գլուխ ի մէջ դառնութեան եւ տառապանաց:» Ուրիշ նամակագիր մը հետեւեալ կ'երպով կ'արտայայտուի անոր մասին. «Սախտեալ ի հաւատոյն եւ թիւրեալ ի ճշմարտութենէ, կամ դարձ կամ բարձ»: Պրոխորոն վրդ. Ս. Յակոբի վանքին մէջ ունի անձնակոն յիշատակներ, որոնք են մէկ գրչագիր (ՄՁ. Թ. 948). մէկ ոսկի բուրվառ, վզի ոսկիէ խաչ մը, սրմայով բանուած թագ մը, եւ մէկ վարագոյր Աւագ սեղանի, կարմիր տթլաս կլապտանով (տե՛ս Յուզակ Թեոդորոս պրքի 1817, եւ ՄՁ. Թ. 532): Նոյն վարագոյրին յիշատակարանն է հետեւեալը. «Յիշատակ է պատուական վարագոյրս Սիւրստրեցի Պրոխորոն ածաբան. վրդ-ին եւ